№ 121 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24 1889 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24 № 121

ՏԱՍՆ ԵՒ ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են Իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ապարանը և ապարանցիները. Նամակ Արդուինից. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.— ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Պարսկաստանից.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՊԱՐԱՆԸ ԵՒ ԱՊԱՐԱՆՑԻՆԵՐԸ

—

Էջմիածնին շատ մօտիկ գտնվող Ապարան գաւառակը ողորմելի և մոռացված դրութեան մէջ է գտնվում։ Այդ պատճառով նա արժանի է ուշադրութեան։

Այդ Ապարան գաւառակն է, որ հնումը Նիգ կամ Նգատուն գաւառի մասն էր կազմում, ուր հայոց Սմբատ Նահատակ թագաւորի որդիքը՝ Աշոտը ու Մուշեղը Շիրակ գաւառից գալով՝ յարձակվեցան Յուսուփ ոստիկանի զօրքերի վրա. Մուշեղը բռնվեց դարան մտնող թշնամիներից։ Իսկ այժմ այդ տեղը Էջմիածնի գաւառի չորրորդ մասն է կազմում, հետևեալ սահմաններով. արևելքից՝ Վարաժնունիքը և Նգատան վերին մասը, հարաւից՝ Արագածոտն գաւառը, հիւսիսից՝ Բամբակաձորը և արևմուտքից՝ Արագած սարը և մասամբ Շիրակը։

Ապարան յորջորջվելու պատճառը երկուսն է կարծվում. առաջինն է, ինչպէս աւանդութիւն կայ, ա ն պ ա ր ա ն բառի կրճատումը, որովհետև ըստ ժողովրդի, իբր թէ՝ երբ մեր Գրիգոր Լուսաւորիչը աղօթում էր Արագածի գլխին, այն ժամանակ մի ա ն պ ա ր ա ն կ ա ն թ կ ղ լոյս կը տար Նրան գիշերային մթութեան մէջ, և հիմա էլ այնտեղ է և իբրև թէ կը տեսնվի սուրբ օրերին, ի հարկէ, արժանաւորների աչքերով միայն։ Իսկ երկրորդ պատճառը այն է, որ Շիրաղալայ գիւղի մօտ մի բարձր բլրի վրա կայ մի աւերակ ապարանք կամ պալատ, որ չինած է իբրև ամարանոց հայ թագաւորների համար հեթանոսութեան ժամանակ. որովհետև չինութեան որձաքար կռանակով վէմերը և չորս հաստատուն կրաձոյլ բրդերը ամեն տեսնողին կարող են հաւատացնել թէ՝ «Է գործ հին նախնի Հայոց», ուստի և հաւանական է, որ այդ ապարանքից առած լինի այս վայրը իր Ապարան անունը։

Ապարանը արգաւանդաւոր է և ջրաէտ. օդն ու ջուրը շատ առողջարար են, իսկ բնակիչները ջղոտ ու տոկուն։ Հիւսիսային և արևելեան կողմի սարերի ծործորներում կայ ցածուն անտառ. կան նոյնպէս պղնձի և երկաթի հանքեր, թէև խոպանած։ Իր սահմանի մէջ Արագածի գլխի մօտ գտնվում է ծծումբ (քուքուրթ)։

Ապարանը 30 գիւղ է, ուր կան 2,158 տուն, 10,286 արական, 8,867 իգական, ընդամենը 19,153 բնակիչ, որոնք բոլորն էլ լուսաւորչադաւան հայեր են։ Ամեն գիւղ ունի իր եկեղեցին 1—4 քահանաներով, բայց չը կայ գէթ մի անշան դպրոց, ուր 4—5 տղայ կարդալ և գրել սովորէին. միայն տէր-պապաները իրանց ծերութեանը իբրև նեցուկ մի երկու մոնթ կունենան, որոնց անգիր սովորեցնում են եկեղեցու արարողութիւնը, և շատ քիչ է աջողվում նրանց կարդալ իմանալը։

Տեղիս ժողովուրդը գաղթել է Թիւրքաց Հայաստանի Տուրուբերան աշխարհից (Մշու կողմերից) 1830 թվին։ Երկար միջոց ժողովրդի ղեկը իրանց մէլիքների ձեռքն էր, որոնց սերունդները դեռ հիմա էլ գտնվում են մի քանի գիւղերում։ Այդ մէլիքները կորցնելով իրանց պաշտօնի կրոնասէր և ժողովրդասէր ոգին մի ծանր բեռն էին դառել տգէտ և հարստահարված գիւղացու համար։

Բնութիւնը յատկապէս բաժանել, որոշել է այս գաւառակը միւս գաւառներից բարձրաբերձ և անմատչելի լեռնով՝ մի խուլ անկիւն կազմելով. ձմեռը սրա հաղորդակցութիւնը դրսի հետ բոլորովին կտրվում է։ Շրջակայ գաւառների և քաղաքների սրիկայ և աւազակաբարոյ անձնաւորութիւնները ամիսներով են հիւրասիրվում այստեղ և ինչ խաղեր ասես, որ չեն խաղում այդ պարզամիտ ու թշուառ ռամիկների գլխին. հազար ու մի տեսակ նորամուտ և նորալուր չարագործութիւններով կեղեքում, ճնշում են խեղճերին թէ բարոյապէս և թէ նիւթապէս, և ապարանցին իր նահապետական վարքով ծաղրի և արհամարհանքի առարկայ է դառել այդպիսիների շնորհով։ Եթէ Արարատեան նահանգում մէկը կամենայ իր հետ վիճողին աւելի խոր վիրաւորել քան՝ «Էյ, ապարանցի»։ «Ես ապարանցու հետ բան չունեմ»։ Ցաւալի է տեսնել թէ ինչպէս տըմարդի և անգութ կերպով են վարվում վաճառականներում ողորմելի ապարանցիների հետ. բաւական չէ որ ապրանքը 2—3 անգամ թանգ գնով ծախում են, այլ և օյին չի մնայ, որ գլխներին չը թափեն, մանաւանդ մանրավաճառները։

Ապարանցին ամեն տեղ աչքի է ընկնում իր մռայլ դէմքով, կոշտ կազմուածքով, կեղտոտ և անճոռնի ձեւի չորերով, հայկական գտակով, գունաւոր բրդէ թելից գործված գուլպաներով։ Նա խօսում է և զրաբարին մօտ աղճատած բարբառով. օրինակ՝ «Մարէ, առ զման». (մայրիկ, ամանն առ). «Խովիւ կուր գիլուն երետ զմեր մաքին». (հովիւը մեր մաքին գայլին կերակուր տուեց։)

Ապարանցու տունը ներկայացնում է կեղտոտութեան և խեղճութեան ծայրայեղ տիպարը. տան որ անկիւնն որ նայես՝ աղբ է կիտված. տեղաշորերին մտիկ տալ չէ կարելի, կեղտից ու մրխից սևացած, մաշված թել թել կախընկած են. կարասիքն են մի քանի խեցեղէն անպիտան ամաններ և յարդէ սևացած փսխաթներ. փոքրիկ տղայքը կիսամերկ՝ աղտեղութիւնների վրա թաւալ են տալիս։ Չը նայելով տնային այսպիսի վատ վիճակին ապարանցու կինը դեռ իր մամական (մեծ մայր) թերևս կռապաշտութիւնից մընացած զարդերից ձեռք չէ վերցրել. պատառոտած ցնցոտիների վրայից կապում է չորս վերշօկ լայնութեամբ հինօրեայ կամարը, որի վրա խիտ ու անխնամ կերպով շարած են օ ր օ ղ ն ե ր (մի տեսակ ուլունքներ), արևից սևացած մերկ, բայց հարուստ կուրծքի վրա քարշ է անում ծըմրուկ և հնագոյն ուլունքներ, որոնց ծայրից կախած են գրբացների, թէկուզ հայի լինի կամ թուրքի, հմայած, հմայիլներ. յուլունքը գործ է դնում ապարանչանի տեղ, և կապում է նաև սրունքների բարակ տեղը՝ կոճերի վերև։

Տգիտութիւնը ընդհանուր է. դպրոց չը կայ և ոչ մի հատ։ Չը կան գրագէտ քահանաներ անգամ, որ կատարեն գործակալի պաշտօնը։

Տ. Գ.

ՆԱՄԱԿ ԱՐԴՈՒԻՆԻՑ

—

Հոկտեմբերի 14-ին

Ամսիս 5-ին Ճորոխ գետում խեղդամահ եղան չորս հոգի թուրքեր. սրանցից երեքի դիակները գտնվեցան, իսկ մէկինը՝ ոչ։ Սոքա նաւակով—կայեղով գալիս էին դէպի Արդուին Արդանուջի մօտ Դօլիս-կանայից, որտեղից սկսած կարելի է նաւարկել Ճորոխի վրայից դէպի ներքև Շավշէթ-իմերխէվ և Արդանուջի գետակների միջոցով, որոնք Դօլիս-կանայում միանալով միմեանց հետ այդտեղից մի քիչ վար մտնում են Ճորոխ գետը։ Գօրդան, որ գաւառում հռչակաւոր խաղող և գինի տուող այդիների տեղի անունն է, այդեկութ էր լինում այդ օրերում, ուր սովորաբար հաւաքված է լինում այդ միջոցին մարդկանց մեծ բազմութիւն Արդուինից և Արդանուջից—ոմանք իրանց սեփական այգիները կթելու «քաղցոց անելու», ոմանք էլ «չիրա» կամ խաղող դնելու։ Խեղդամահ լինողները ղրկված են լինում Գօրդա Թէյֆիկ բէգ Աթաբեգովի կողմից այդեկութի համար, և իրանց ազատված երկու ընկերների հետի միասին նստելով խաղողի կթոցներով ծանրաբեռնած նաւակում դէպի բէգի պալատը վերադառնալիս—Կօրձուլի, որ Արդուինի մի թաղն է գետի եղերքին, նաւակը գետի սրընթաց հոսանքից կատաղաբար մղվելով՝ ուժգնապէս ընդհարվում է այնտեղ Մամածմինդա թաղի տակ ջրի հոսանքին դիմադրող մի ժայռին այնպէս, որ մէջտեղից երկու կտոր է լինում և նստողները խեղդամահ են լինում։

«Մշակի» 113 համարի ներքին լուրերում հրատարակված Մուհարլամ անունով մի թիւրք ոճրագործ երիտասարդի ձեռքով Տաճկաստան փախցրած արդուինցի հայ աղջիկը—Սիւրմա Անոհանը և նրան յափշտակող Մուհարլամի մայրը, այստեղ տարածված լուրերի համեմատ, Թիւրքաց կառավարութեան միջոցով գտնված և տարված են Կարին, ուր յանձնված են ռուսաց հիւպատոսին, որը, ինչպէս ասում են, ղրկել է Տրապիզոնի վրայով Բաթում, որտեղ բանտարկված են Մուհարլամի հայրը և եղբայրը։ Իսկ Մուհարլամը բռնվել է Թիւրքաց Երզրում գիւղաքաղաքում. անշուշտ և նա կը յանձնվի ռուսաց հիւպատոսին, որը և նրան կուղարկի Բաթում դատվելու։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

(ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ)

I

188... թվի հոկտեմբերի 12-ն էր։ Ամբողջ օրվայ երկար և յոգնեցուցիչ ճանապարհորդութիւնից յետոյ, վերջապէս հասանք երեկոյեան դէմ Ջուլֆա, ռուսաց հողի վերջին կէտը։ Պարսկաստանից բաժանված էինք միայն Արաքս գետով։ Մի ծանօթ պարսիկ, որ մեզ հետ ճանապարհորդում էր Երևանից սկսած, խորհուրդ տուեց չը սպասել, չը գիշերել ռուսաց հողի վրա, այլ անցնել գետի միւս տիր։ «Քաջալերութիւն, աղա, ասում էր ուրախացած պարսիկը, քիչ է մնացել, շուտով կը հասնենք Թավրիզ, այն ժամանակ կը հանդստանանք փափուկ գորգերի վրա, կընկղմենք քնքոյշ նարների մէջ և երբ առաւօտեան կը զարթնենք, մեղմասիւն զեփիւռը կը փչէ քու արտանունքների վրա, զովութիւնը այն օրի, որ պարարված է վարդերի հոտով և Իրանի սոխակների երգով»։ Պարսիկ բարեկամիս բանաստեղծական եռանդը ազդեցութիւն չունեցաւ սակայն. թէև գիտէի, որ Սաղիի և Հաֆիզի հայրենիքը հռչակված է իբրև անուշահոտ վարդերի և քաղցրախօս սոխակների երկիր, այն ևս այնպիսի սոխակների, որ առաւօտից մինչև երեկոյ իրանց սիրուհուն—վարդին զուարճացնում են իրանց զմայլեցուցիչ երգի դայլալիկներով, բայց առ այժմ ամեն բանաստեղծութիւնից աւելի անհրաժեշտ էի համարում հանգստանալ, ուստի պարսիկ բարեկամիս բացատրեցի, որ մշտնջենաւոր դարձան այդ անմահական բարիքները վայելելու համար պէտք է շատ հեռու—Շիրազ (Հաֆիզի հայրենիքը) գնալ, իսկ մի այդպիսի երկար ճանապարհորդութիւն անելու համար պէտք է կազդուրել ոյժերը....։ Գիշերեցինք Ջուլֆայում։

Խոստովանում եմ, որ այդ գիշեր հաղար անդամ անէծք կարդացի պարսիկ բարեկամիս գլխին. անուշահոտ վարդերի և քաղցրաերգ սոխակների երկրի մասին իմ երևակայութիւնս ուրիշ պատկեր էր գծագրել. այդ երկրի անուան հետ ես անբաժան էի համարում խաւարի, բըռնակալութեան, սարսափելի հնութեան գաղափարը, ուստի այդ միմեանց հակասող պատկերները մտքիս մէջ միմեանց հետ խառնվելով, ինձ հանդստութիւն չէին տալիս, բայց դարձեալ Թավրիզի փափուկ գորգերի վրա շուտով հանդստանալու քաղցը յուսով օրորվելով, քունս տարաւ։

Երկրորդ օրը մի աշնանային մռայլ առաւօտ էր, երբ մենք պատրաստվում էինք մնաս բարև ասել մեր հայրենի հողին և ոտք կոխել Պարսկաստանի հողի վրա։ Խուլ մռնչիւնով հոսում էր պղտոր Արաքսը. նրա անհիւրասէր նայուածքը, կարծես, ասում էր մեզ՝ «Ինչ էք եկել որոնելու, վրդովելու դարեւոր, մշտնջենաւոր քունը, որի մէջ ընկղմած է իմ հարևան աշխարհը, կամ գուցէ կամենում էք հետևել ձեր եղբայրների օրինակին, որոնք 270 տարի առաջ իմ վրայով անցան և յաւիտեան բաժանվեցին իրանց հայրենիքից....»

«Նաւակը պատրաստ է, լսվեց մի ձայն, շուտ արէք»։ Մենք աճապարեցինք մեր անցագրերը յետ ստանալ այստեղ գտնվող մաքսատնից. ով որ կամենում է անցնել, պէտք է այդ մաքսատան վարչութեան ներկայացնէ իր տնցագիրը, և սրտներս պնդացնելով, ուղղեցինք մեր քայլերը դէպի նաւակը։ «Ալլահը թող խափանէ չարը, ինշալլահ, սհաթը բարի է», ասեց պարսիկ բարեկամս, ոտքը կոխելով նաւակի վրա։ Երկու զինուոր կանգնած գետի ափին, մի առ մի թոյլ էին տալիս մտնելու նաւակը, ով որ անցագիր ունէր ձեռքին. հաղիւ տեղաւորվել էինք նաւակի վրա, որ մեր ետևից լսվեց մի աղիողորմ լացի ձայն. «Էյթանը քեզ տանէ, անիծեալ տղայ, էլ ժամանակ չը գտար լացելու. ոհ, այդ ետևից լացելը նշան է, որ մեր գլխին մի դժբաղդութիւն է գալու. ախար ես ասեցի որ երէկ անցնէինք, տեսնում ես սհաթը չար է», բարկութեամբ ասեց պարսիկ բարեկամս։ Ես յետ նայեցայ տեսնեմ իմ խեղճ Մանաս ծառան է, որին գլխուորը չէր կամենում թոյլ տալ մտնելու նաւակը, ասելով որ անցագիր չունի։ Բանը նրանումն էր, որ իմ անցագիրս ամբողջ ընտանիքի համար լինելով, ես միամտօրէն կարծել էի, որ իմ ծառան ևս ընտանիքիս մասն է կազմում, բայց այլապէս էր մտածում մաքսատան գլխաւորը։ «Նա պէտք է մնայ այստեղ մինչև անցագիր բերել տայ իր համար, կամ վերադառնայ իր տեղը»։ Աղաչանք, պաղատանք ոչինչ չազդեց խստապահ աստիճանաւորի վրա. ամենից առաջ օրէնքը,—ահա ինչ էր պատասխանում նա։ Ես մնացել էի չուարած։ Մանասը մի 14 տարեկան գիւղացի տղայ էր, որին վարձել էի Շուշում, չարունակ լացում էր. «աման, աղա, ինձ այս չօլում մի թող, խեղճ եմ»։ Եւ ճշմարիտ, ինչպէս թողնէի խեղճին մի անծանօթ, անապատ տեղ։ Այդ կրիտիական րոպէում պարսիկ բարեկամս օգնութեան հասաւ. իմանալով Մանասի լացի պատճառը, նա մի բան՝ փսփսաց ականջումս, որի հետևանքն այն եղաւ, որ ես հանդարտեցրի Մանասին համոզելով, որ երկու ժամից յետոյ կը վերադառնամ և իրան կը տանեմ հետս։

Ջուանը, որով նաւակը կապված էր եղրի վրա ամրացրած մի սիւնից, բաց թողվեց. թիավարները սկսեցին շարժել թիերը։ Նաւակը, որով մարդիկ անցնում էին, երևի դեռ 200 տարի առաջ, քիչ-քիչ մղվում էր հոսանքի և ուժեղ բազուկների ուժով։ Պէտք է ասել, որ Արաքսի վրա բանում է երկու նաւակ կամ լաստ. մինը պատկանում է ռուս տէրութեան և նրանով անցնում են Հայաստանից եկող անցաւորները, ձրիաբար, միւսը պատկանում է պարսից տէրութեան և նրանով անցնում են Պարսկաստանից եկողները։ Մի կողմի նաւա-

Նախկին արդուինցի մի թիւրք երիտասարդ, Մէջօ անունով՝ գաղթելով Արդուինից սահմանի վրա Արդուինին մօտ տաճկական մի գիւղում բնակութիւն է հաստատել։ Իբրև զրացի առհասարակ անարգել անցնում են սահմանից դէս ու դէն, գալիս-գնում են։ Այդ Էղիզը գալիս է Արդուին զինված նոր ձևի հրացանով և այլ զէնքերով, ման է գալիս քաղաքում։ Անցեալ օր—ամսիս 11-ին երեկոյեան դէմ սա հրացան է արձակում Արդուինի Սկեբա թաղում Պողոս Փուչինեան անուամբ մի հայ-կաթոլիկ երիտասարդի վրա, որի դէմ մի փոքրիկ քէն է ունենում. գնտակը անցնում է կողքը ծակելով, դիպչում է քարին և նորից ետ դառնալով մի վերք ևս տալիս ու դէն ընկնում։ Ոճրագործը արդէն իր գործը կատարած համարելով փախչելիս է լինում, երբ քաջ երիտասարդը, չը նայելով իր ստացած վէրքերին, վազում վրա է հասնում ետևից, տապալում է նրան գետին և մինչ ուժասպառ լինելը կռուելով՝ խլում է նրանից հրացանը և գլխի կարալախը-բաշլիկը, երբ ոճրագործը ձեռքից դուրս պրծնելով փախչում է։ Ասում են, որ երիտասարդի վէրքերը վտանգաւոր չեն։

Ց. Գ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Նորերս Շուշի քաղաքում մի տխուր դէպք պատահեց, որը, դառնութեամբ պիտի խոստովանենք, ոչ առաջինն է և ոչ վերջինը և որը կայանում է հետևեալում։ Մի գիւղացի պատանի գնում է շուշեցի մի վաճառականի մօտ և սկսում է, ի հարկէ, որոշ պայմանով օգնել նրան առևտրական գործերի մէջ. այդ լինում է 1883 թուին. բայց ափսոս որ այդ պայմանը լինում է միայն բերանացի։ Պարզամիտ պատանին հաւատալով վաճառականին սկսում է մեծ եռանդով օգնել նրան առևտրի մէջ։ Այդ օգնութիւնը տևում է վերոյիշեալ թուից մինչև սոյն թուի յունիսի վերջը։ Վերջը պատանին ուշքի է գալիս և մտածում է հաշիւը վերջացնել վաճառականի հետ։ Մի օր այդ պատանին քաղաքավարի կերպով խնդրում է Շ-ից նրա խոստացած ռոճիկը. բայց որքան է լինում պատանու զարմանքը, երբ նրա անգութ «խազէյնը» առաջարկում է միայն կէս տարվայ ռոճիկը։ Պատանին չէ վերցնում այդ փողը, միայն մի քանի ռուբլի փող է առնում իբրև ճանապարհածախս ու ուղևորվում դէպի իրանց գիւղը, ուր նրա աղքատ ծնողները անհամբեր սպասում են եղել իրանց որդուն՝ գրպանը լի փողով։ Խեղճ տղան ճանապարհին մտադիր է լինում մինչև անդամ վերջ տալ իր կեանքին։ Իսկ անխիղճ Շ. մի օր լսելով, կամ ուղիղն ասած՝ դուցէ ինքը իրանից հնարելով, որ իբրև թէ իր գործակատարը և իր կինը փոխադարձաբար սիրում են եղել միմեանց և հիմնվելով դրա վրա՝ վաճառականը մի խայտառակ նամակ է գրում գիւղը՝ իր նախկին գործակատարին, որի մէջ զգուշացնում է նրան երբէք աչքին չերևալ, յայտնելով որ ռոճիկից մի կօպէկ անդամ չի տեսնի, և այդպիսով խեղճ պատանին զրկվում է մօտ 400 ռուբլուց։ Երանի թէ այս սովորութիւնները վերջանար մեր վաճառականների միջից, և նրանք մտնէին մեր խեղճ գործակատարների դրութեան մէջ, որոնք իրանց ամենալաւ տարիները նուիրում են Շ-ի պէս անգութների օգտին ծառայելու։ Աւելի ցաւալին այն է, որ այդ տեսակ վարմունքը սովորական է, և այդպիսի անպատիժ հարստահարութիւն անօգնական «պրիկաշչիկները» շատ են տեսնում։»

—

Կ. Պոլսից մեզ գրում են, որ հաւանականաբար չուտով պ. Աղամեան կը գայ Բագու։ Բագումի պ. Աղամեան կը մնայ մի քանի շաբաթ և կը մասնակցի մի քանի ներկայացումներին։

—

Մեզ հաղորդում են, որ տեղական հայ դերասանական ոյժերից կազմված մի խումբ, չուտով սկսելու է ներկայացումներ տալ Բագու քաղաքում։

—

Կ. Պոլսից մեզ գրում են. «Հոկտեմբերի 14-ին այստեղէն պիտի մեկնի Թիֆլիս գալու և անտի Բագու գնալու համար օր. Սաթենիկ Կոլմանեան։ Օրիորդը Պոլսի առաջնակարգ դաշնամուրի վրա ածող է։ Բերայի ընկերութեան մէջ մեծ յարգ գտած էր նոյն իսկ եւրոպացիներէ. համբաւաւոր Կուաթէլլի բաշայի աշակերտն է։ Սուլթանի պալատի մէջ նաև սիրալիր համակրանք գտած էր և միշտ արքունի հարէմն էր ուր կը նուագէր։ Օր. Սաթենիկի հայրը զարապազցի է և այժմ, կարծեմ Բագու է, Պոլիս ամուսնացած է։ Արուեստագէտ օրիորդին Պոլսէն մեկնիլը ցաւ կը պատճառէ մեզ. բայց ապահով ենք թէ իր տաղանդը յոյժ օգտակար պիտի ըլլայ բագուցիներու»։

—

Մշեցիների և Մուսա-պէյի դատի վերաբերմամբ Տրապիզոնից մեզ գրում են հետևեալը. «Կ. Պոլսից այստեղ ստացված են հետևեալ տեղեկութիւնները։ «Այն մշեցիներն, որ Պոլիս տարված են Մուսա-պէյի դէմ դատ վարելու համար, հոկտեմբերի առաջին օրերը աղերսագիր մը տրված են մեծ-եպարգոսին, յայտարարելով թէ Մուսա-պէյի դէմ եղած դատավարութիւնը ապօրէն է։ Մուսա-պէյ կը շարունակէ ազատ պրտըտել, մինչդեռ իրեն դէմ այնքան ծանր ամբաստանութիւններ կան, աւազակութեան, սպանութեան, լկման ամբաստանութիւններ. արդ ըստ օրինի այսքան ոճիրներով ամբաստանուած անձ մը պէտք է ձերբակալուի։ Այն աղերսագիրը երբ մշեցիները կը տանեն եպարքոսին Բ. Դուռը, ոստիկանները կուգեն ցրուել դանոնք, մէկ քանիսներն կը յաջողին հեռացնել, իսկ միւսները անդրդուելի կը մնան. այդ միջոցին մի քանի պաշտօնեաներ կը հարցնեն այդ մշեցիներուն թէ «ինչ կուզէք», կը պատասխանեն թէ Մուսա-պէյի դէմ բողոքագիր բերած են։ «Բայց չէք գիտեր, կըսեն այդ պաշտօնեայները, թէ՝ Մուսա-պէյի համար Սուլթանի կողմէ ընդհանուր ներողութիւն շնորհուեցաւ։» Արդարև մի քանի շաբաթի վեր լուր կը պտրտի թէ Մուսա-պէյ արժանացած է ընդհանուր ներողութեան հանրային հանդամանք ունեցող ոճիրներու համար, իսկ մասնաւոր ոճիրներու համար պէտք է դատուի տաճկաց կրօնական—չէրիի դատարանին առջև, սակայն այս լուր որ տարածուած է այստեղ, չատ ստոյգ չը թուիր։ Ինչ և է այդ մշեցիները կընդունվին եպարքոսի խորհրդականէն, որուն կը յանձնեն իրենց բողոքագիրը։ Եպարքոսի խորհրդականն ալ անարտօրժ տպաւորութիւն կունենայ այդ բողոքագրէն, և կըսէ թէ ինչու կուգան գլխացաւ տալ, քանի որ դատաստանը կը շարունակէ։—Բայց, կըսեն մշեցիք, ահա կըսուի թէ Մուսան ընդհանուր ներողութեան արժանացած է։ «Ով այդպիսի բան մը ըսաւ, կը հարցնէ եպարքոսի խորհրդականը։—Այստեղ ըսին, դուրսը, բոլոր պաշտօնեայները. անուններն չենք գիտեր, բայց ըսողները բազմաթիւ էին։ «Այդպէս բան չը կայ, կը պատասխանէ խորհրդականը՝ հանգիստ տեղերնիդ կեցէք, մեր առատաղուտ կայսրը հրաման ըրած է, որ արդարութիւնը գործադրուի։» Եւ դայս ըսելով կը ճամբէ բողոքողներն»։

—

Այժմ Կովկասեան ցուցահանդէսն այցելողների մեծամասնութիւնը հետաքրքրութեամբ խմբվում է ախալցխացի ոսկերիչների հանդէս դրված արծաթէ իրեղէնների մօտ։ Շնմարիտ որ այդտեղ հիացման արժանի բաների է հանդիպում մարդ. Թիֆլիսում յայտնի ախալցխացի ոսկերիչ Կարապետ Սերովբեանցի հանդէս դրված արծաթէ իրեղէնների մէջ, սեղանի, մինաքարի, քանդակագործ և արծաթէ թելերից ամենանուրբ կերպով շինված առարկաների մէջ աչքի ընկնում նաև երկու արծաթէ սափորներ, զարդարած ոսկով ու մինաքարերով. այդ երկու սափորների բէզէրվուարները շինված են, արծաթի հետ միասին, ջայլամի ձուի կեղևի 14 կտորներով, իսկ այդ ձուի կտորների վրա ամենանուրբ կերպով փորագրված են կրօնական պատկերներ։

—

Մեզ խնդրում են տպագրել հետևեալ նկատողութիւնը. «Թիֆլիսի մուղէյ յաճախողները շատ վատ տպաւորութեան ներքոյ են դուրս գալիս մուղէյի շինութիւնից, և այդ էլ գլխաւորապէս այն ծանր օդի և վատ հոտի պատճառով, որը տիրում է մուղէյի մէջ։ Ինչպէս երևում է մուղէյի վարչութիւնը քիչ ուշադրութիւն է դարձնում իրեղէնները մաքուր պահելու վրա, և չինել չէ տուել շինութեան մէջ լաւ օդանցքներ։ Այդպիսի դրութեան մէջ պահել մուղէյը, կը նշանակի կողմնակի կերպով խոչնդոտ լինել հասարակութեան համար՝ որը որքան ցանկանայ էլ, չէ կարող այցելել մի այնպիսի հիմնարկութիւն, որտեղ մտնողը ամենից առաջ գլխացաւ է ստանում՝ վատ օդի պատճառով։»

—

Մեզ հասցրած մի քանի վիճակագրական տեղեկութիւններից երևում է, որ Անդրկովկասում տեղացիներից հաւաքած զինուորների մէջ՝ գրագէտ, և առհասարակ ուսում առած զինուորները ամենից շատ հայերիցն են. հայերը այդ կողմից ամենամեծ պրօցէնտն են կազմում։

—

Ֆինանսական շարժում է սկսվել Թիֆլիսի հասարակութեան մէջ։ Վերջին օրերում պետական բանկի Թիֆլիսի բաժինը արտասովոր կենդանութիւն է ստացել. ահագին բազմութիւն այնտեղ խռնված՝ գրվում է ազնուական կալուածական բանկերի նոր գրաւական թղթերին։ Ստորագրվել ցանկացողների թիւը բաւական մեծ է. —և դրա գլխաւոր պատճառներից մէկը, ի հարկէ, դէպի խաղարկութեան տոմսակները ունեցած սէրն է։

—

Զանազան կողմերից մեզ հաղորդած տեղեկութիւններից երևում է, որ այս տարվայ զինուորակոչը աւարտվելու վրա է, վիճակահանութիւնը համարեա վերջացած է, և այժմ վիճակ հանողներին ենթարկում են բժշկական քննութեան։

—

Լսում ենք, որ նոր կարգադրութեան համաձայն, տեղացիներից հաւաքված զինուորները այլ ևս չեն կազմելու տեղական դրուժինա, ինչպէս մինչև այժմ էր, այլ պիտի կազմեն առանձին գնդեր։ Այդ գնդերի մնալու համար որոշված են տեղեր։

—

«Արձագանքի» խմբագրութիւնը կառավարութիւնից թոյլատրութիւն է ստացել առաջիկայ յունվար ամսից շաբաթաթերթը պատկերազարդ դարձնելու։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Կ. Պոլիս, 12 հոկտեմբերի

Հետաքրքրական լուր չունինք, կամ լաւ ևս ունինք այնպիսի լուրեր, որոց վրա շատ ծանրանալ օգտակար չէ։ Պ. Վանպէրի անցեալ շաբաթ մեկնեցաւ՝ ասկէ և գնաց Եւրոպա. պիտի վերադառնայ մի քանի շաբաթէն։ Մեկնած է նաև պ. Զերազ, որ այժմ կը գտնուի Եւրոպա. Պէրլինի վեհաժողովին հայ պատգամաւորութեան քարտուղարն ու ոգին երբ մեկնեցաւ աստի, այդ մեկնումը շատ մեկնութիւններու առիթ տուաւ, և գոհունակութեան առիթներ հայթայթեց շատ շրջանակներու մէջ։

Իբր լուր, որ քիչ ատենէն իր կարևորութիւնը պիտի ունենայ, կրնանք հաղորդել, թէ Աղդ. Ժողովի ատենապետ, պ. Թիրեաքեան, և Քաղ. Ժողովի ատենապետ պ. Սահակ Ղազարոսեան այս շաբթուս մէջ կարևոր տեսակցութիւն մը ունե-

---

կը իրաւունք չունի միւս կողմի անցորդներին բերելու։ Պարսից նաւակը վճարով է. իւրաքանչիր գլխից առնում են 1 ղռան (30 կօպէկ), իւրաքանչիւր գրաստից 15 կօպէկ, ապրանքի հակից՝ 30 կօպէկ։ Նա պատկանում է մի մասնաւոր անձի, որը տարեկան 2000 թումանի (600 ր.) իջարայով (կապալով) է տալիս ուրիշներին, և այդ նրա համար, որ պարսից Ջուլֆայի հողը, այսինքն այդտեղ գտնված գիւղերը այդ անձի սեպհականութիւնն է, ուրեմն և Արաքսը, իբրև իր հողով անցնող մի գետ, նրա վրա նաւակ բանեցնելու իրաւունքն իրան է վերաբերվում։ Սակայն այդ նաւակը այնքան հին, փտած և խախուտ է, որ մի նշանաւոր անձ եկած ժամանակ միշտ խընդրում է ռուսաց նաւակը, որն աւելի ամուր է և փոքր ի շատէ նաւակի չէնք ու շնորք ունի։ Նաւակը չը կանգնեց բոլորովին պարսկական ափի մօտ, այլ մի քիչ հեռու. իսկոյն մի քանի թուրք մշակներ ջուրը մտան մինչև սրունքները, եկան վեր եկան նաւակի վրա և ամեն մինը սկսեց մեր իրերից մի բան խլել։

«Սհաբ, այ սհաբ (այսպէս են կոչում Պարսկաստանում բոլոր եւրոպացիներին, կամ ով որ եւրոպական գլխարկ ունի ծածկած) տուէք ինձ ձեր իրերը, ես կը տանեմ և ձեզանից մի լաւ անամ (ընծայ) կը ստանամ»։

Մի բօպէում տիրեց կատարեալ անկարգութիւն. հայհոյանք, աղաղակ, բռունցքի հարուած, մի խօսքով իսկոյն զգում ես Պարսկաստանի հոտը....

Մշակները մեզ մի առ մի շալակեցին և ջրից անցկացնելով հանեցին ափը։ Մենք պարսկական հողի վրա էինք։ Արաքսի պարսկական ափը ռուսականի պէս աւազուտ, բուսականութիւնից զուրկ մի անապատ է ներկայացնում. ամառը աւազը տաքանալով արևի կիզիչ ճառագայթներից, այդ տեղը մի հրաշէկ թոնիր է դարձնում։ Ընդամենը չորս շինութիւն կայ. մինը բիլէթխանէն է, մաքսատան ճիւղը, որտեղ անցագիրներն են նայում, բախտաբ-խանէն, որտեղ եկող գնացող ապրանքներին են նայում,—փոստատունը նոր շինած մէհման-խանայով (հիւրանոց), որի տանիքի վրա ծածանում է պարսկական դրօշակը, իսկ ճակատին նկարված է յաղթական առիւծը մի թաթում սուր բռնած, իսկ մէջքի վրա արեգակը, այն է շիր-խուրշիդը, երրորդը—հեռադրատունն է պարսկական և հնդկա-եւրոպական, չորրորդը քարավանսարա ճանապարհորդների համար։

Ինչպէս տեսնում էք պատկերը ամենապարզ է և բանաստեղծական տեսարանի հեռքն անդամ չը կայ, բայց պարսիկ բարեկամս երջանիկ էր. վերջապէս կարելի էր ուղղափառ մուսուլմանի պէս նամազ կատարել....

Հաւիւ մի երկու քայլ արինը, որ մի ֆարրաշ մօտենալով, հրաւիրեց մեզ բիլէթխանէն գնալ և խանին ներկայանալ, բայց այդ միջոցին մի ուրիշը վազելով յայտնեց, որ խանը չը գիտէր որ մենք ընտանիքով ենք, ուստի հրաւիրում է դնալ մէհման-խանէն, ընտանիքը տեղաւորել և յետոյ դալ։ Պարսիկ խանի կողմից մի այդպիսի վարմունք հաճելի էր, ուստի պարսիկ բարեկամս բացականչեց. «Միրզա Հասան Ալի խանը նաջիբ մարդ է, աղաղաղայ է»։

Մէհման-խանէն, ուր մեզ ընդունեցին, բաղկացած է 4—5 սենեակից, բոլորն էլ լաւ կահաւորած եւրոպական և պարսկական ճաշակով. այդտեղ մենք դատանք աթոռ, սեղան, անկողին։ Այս շինութիւնը նոր է շինված Շահի հրամանով։ Վերջապէս դնացինք խանի մօտ և ներկայացրինք մեր անցագիրը, որ այդտեղ պիտի նայէին (viser) և իւրաքանչիւր անձից 60 կ. առնէին։ Բիլէթ-խանէի դրան առջև թուրք մշակների ահագին բազմութիւն կար հաւաքված. խանը ման էր գալիս, իսկ բոլորը խոնարհութեամբ առաջը կանգնած աղերսական դէմքով, աղաչում էին.

—Խան, մեզ քո գլխով շուտ տուր, հաղարթը Ալու խախրին, մեզ թոյլ տուր դնանք, ահա երեք օր է այստեղ ընկած ենք։

—Էհ, վդար սուխտաներ (հէր անիծածներ) կորէք աչքիցս թէ չէ կը հրամայեմ վայտի տակ կը չորացնեն ձեզ. ձեզ ասում եմ որ ամեն մինը պէտք է 3 թուման (9 ռուբլի) տայ բիլէթի համար, չէք ուզում յետ դնացէք Թավրէզ, այնտեղ առէք եկէք»։ Մշակների թիւը մօտ 50 կը լինէր։

Խանը ինձ հրաւիրեց սենեակ, «բիսմուլլահ, բիսմուլլահ» ասելով։

—Բէյցյայ (տղայ) թէյ բեր. զալիան բեր։

—Տեսնում էք, ինչ նեղութիւն ենք քաշում այստեղ. խօսք չէ լինում հասկացնել դրանց։

—Ինչ են ուզում այդ մշակները։

—Նրանք գնում են Ռուսաստան մշակութիւն անելու, բայց թազքէրէհ (անցագիր) չունեն, եկել են այստեղից առնեն։

—Միթէ դուք այստեղ կարող էք տալ թազքէրէհ։

—Ինչու չէ, ինչքան ուզես. հատը 1 թուման (3 ռուբլի)։

—Բայց դուք սրանց բոլորին միթէ ճանաչում էք, ով են, որտեղից են։ Խանը զարմացած նայեց երեսիս։

—Ինչ հարկաւոր է ճանաչել, ես այստեղ նըստած եմ թազքէրէհ տալու, ով կուզի կը տամ։

—Ուրեմն ինչու այս մշակներին չէք տալիս։

—Որովհետև չեն ուզում վճարել 3 թուման ամեն մի թազքէրի համար։

—Ինչու վճարեն 3 թուման, քանի որ դուք ասեցիք 1 թուման է գինը։

—Սհաբ, եթէ մենք ամեն բան իր գնով ծախենք, էլ որտեղից կարող ենք վճարել տարեկան 12000 թուման, չէ որ մեր եկամտի աղբիւրն էլ այս է։

—Ինչ, 12,000 թուման, հարցրի ես։ Խանը բացատրեց ինձ որ ինքն իջարայով (կապալով) է վեր առել Ջուլֆի թազքարախանէն, այսինքն բիլէթ ծախելու իրաւունքը. վեր է առել Թավրիզի մաքսատան վարչութիւնից, որն իր հերթին վեր է առել Էմին-Սուլթանից, իսկ սա էլ Շահից։

ցան պատրիարքարանի մէջ ի մասին թեզքէրէի մը, որ դատական գործոց նախարարութիւնը ուղղած էր ի պատրիարքարան հոկտեմբեր 7-ին։ Այդ թեզքերէի մասին, որ բացառիկ կարեւորութիւն ունի, առ այժմ ոչինչ կըսենք։

Ուրեմն մէկդի թողլով այդ բոլոր խնդիրներն, որ մեր բառարանի մէջ «փափկանկատ» խնդիր կը կոչուին, խօսենք Ազգ. Ժողովի հոկտեմբեր 6-ի նստին վրայ։ Այդ նիստը կրնանք «գրեթէ նիստ» մը համարել, զի ժողովականներու մեծագոյն մասը ներկայ չէր, սակայն եթէ «բազումք են կոչեցեալք և սակաւք ընտրեալք» դժգոհ պէտք չէ մնանք։ Ժողովը որոշումներու չը յանգեցաւ, բայց զբաղեցաւ այնպիսի խնդիրներով, որոց եթէ մեծ ժամանակ մը զոհուի, տարակոյս չը կայ թէ մեր մտաւոր ու բարոյական զարգացումը կարեւոր փոփոխութիւններու կրնան ենթարկուիլ։ Կրօնական ու կրթական հարց, ահա այն երկու խնդիրներն, որոց նուիրեց հոկտեմբեր 6-ին Ազգ. Ժողովն իր բոլոր ուշադրութիւնը։

Եկեղեցական կենսական խնդիրներու համար մասնախումբ մը ընտրուած էր 1885 թուին և սակայն այդ մասնախումբ տակաւին աշխատութեան մը արդիւնք չէ ներկայացուցած. հարկն ստիպողական է. չենք գիտեր ինչ կը պատահի մի քանի տարիներու մէջ, այժմէն պէտք է փութալ. ուրեմն Ազգ. Ժողովը քիչ մը խստապապանջ եղաւ։

Երկրորդ խնդիրն էր կրթական խնդիրն, որու մասին Ազգ. Ժողովն անհոգ կը կենար, բայց վերջի ժամանակներս սկսան հրատարակուիլ վրդովիչ յօդուածներ։ Հանրային կարծիքն զբաղուած է և Ազգ. Ժողովը փութալով կրթական խնդրով զբաղիլ ոչ միայն հանրային կարծիքը կը զոհացնէ, այլ, անտարակոյս, ազգին նշանաւոր ծառայութիւն պիտի մատուցանէ։ Հոկտեմբեր 6-ին սկզբնաւորութիւն մը եղաւ կրթական խնդրին, կարծիքներու փոխանակութիւն մը, աւելի ոչինչ, բայց վերջապէս սկզբնաւորութիւն մը բարեգուշակ է միշտ։

Ինչ պիտի ընէ Ազգ. Ժողովը կրթական խնդրի մէջ։ Կը կարծենք թէ Ազգ. Ժողովը պէտք է որ լրջաբար զբաղի երկրին տնտեսական վիճակին համեմատ կրթութիւն մը տալ հայ մանուկներուն։ Բարոյական մասը խնդրի առարկայ չենք ըներ, բայց վերջապէս արուեստ մըն է միանդամայն և պէտք է այն արուեստը սովորցնել, որով կարելի է ապրիլ, առանց աչքէ վրիպելու ապագան ալ, պատրաստել սերունդներ թէ ներկային և թէ ապագային համար։ Որոշել թէ ինչ որ կը յարմարի Պոլսի, որ առևտրական քաղաք է, անյարմար է Հայաստանի զանազան գաւառներուն, որք բոլորովին երկրագործական են։

Պէտք է գիտնալ թէ մեր սահմանադրութեամբ ամեն թաղ, ամեն գաւառ ազատութիւն ունի իր դպրոցներն անկախ կերպով կառավարել, սակայն կենտրոնական Ազգ. Ժողովն այսու հանդերձ կարող է շատ բաներ ընել, նոյն իսկ Պոլսի զարգացեալ դասին այս առթիւ խօսածները, գրածները, վիճաբանութիւնները խորապէս կրնան ներգործել Պոլսի թաղերու վրայ. Հայաստան Պոլիսը կօրինակէ կրթութեան հրահանգներու մէջ. ուրեմն անոնց մէղքը մեր վիզն է։

Երբ այս խնդիրներն սկսին օրուան խնդիրներ ըլլալ, վիճաբանութիւնները բուռն պիտի ըլլան, և տարակոյս չը կայ թէ տխմարաբանութիւններու կոյտին մէջ, որ այս առթիւ պիտի յայտնուին, առողջ դատողութիւններ, իրաց վիճակին վրայ հիմնաւոր տեղեկութիւններ բաւական առատ պիտի ըլլան և յաղթանակը պիտի մնայ ողջ մտքերու, մանաւանդ երբ մամուլը խնդիրը լրջօրէն ուզէ քննել և ոչ թէ հարեւանցի ակնարկներով։

Մամուլի նոր օրգան մըն ալ պիտի ունենանք հաւանօրէն։ Մեծ աշխատութիւններ կըլլան, որպէս զի «Արեւելեան մամուլ», որ իբր ամսաթերթ կը հրատարակուի Իզմիր—վեցամսեայ դադարումի դատապարտութիւնէ վերջ վերստին սկսաւ հրատարակուիլ,—փոխադրուի Պոլիս և հրատարակուի իբր օրաթերթ։ Բաժանորդագրական ընկերութիւն մը կազմուած է, որ ուրթը հազար բուբլի դրամագլուխ դնելով գործի պիտի ձեռնարկէ. թերթի խմբագիրը, կամ ինչպէս մենք կըսենք, խմբագրապետը պիտի ըլլայ պ. Մատթէոս Մամուրեան, «Արեւելեան Մամուլի» տէրն ու խմբագիրը։ Ամենօրեայ թերթը պիտի սկսի հրատարակուիլ յառաջիկայ տարիի յունուարի սկիզբէն։ Միայն կը մնայ գիտնալ կարելի պիտի ըլլայ արտօնութիւն ձեռք բերել Իզմիրի ամսաթերթը Պոլիս փոխադրելու համար. շատ յոյս կայ թէ կարելի պիտի ըլլայ։ Անցեալ տարի այս միջոցներս նոյն խումբը, որ պիտի հրատարակէր «Արեւելեան Մամուլը», հետամուտ էր հրատարակել «Փարոս» անուամբ թերթ մը, որու մասին ընդարձակ տեղեկութիւններ տուի այն ատեն, սակայն երկարատև աշխատութիւններէ վերջ հնար չեղաւ այդ թերթի համար արտօնութիւն ստանալ։ Իսկ եթէ այժմ կարելի չըլլայ «Արեւելեան Մամուլը» փոխադրել Պոլիս, այն ատեն այդ ընկերութիւնը, իբր օրաթերթ, պիտի հրատարակէ «Հայրենիքը»։ Վերջապէս, ինչ որ ըլլայ, մեծ հաւանականութիւն կայ, որ յառաջիկայ տարին նոր օրաթերթ մըն ալ պիտի ունենանք, օրաթերթ, որ պիտի մրցակից հանդիսանայ «Արեւելքի». իմ կարծեօք, այդ երկու թերթերէն մին կարող պիտի ըլլայ միայն ապրիլ, ինչպէս որ անցեալ տարի փորձառական հաչով ցոյց տուի, և կը կարծեմ թէ մտքերու զարգացումն այնքան յառաջացած է, որ լաւագոյն թերթը միայն պիտի կրնայ ապրիլ։ Պ. Մամուրեան մի քանի օրէ ի վեր Պոլիս է։ Որքան ալ այդ հրապարակագրին հակառակակորդ հանդիսացած ըլլանք, անուրանալի է թէ իբր հրապարակագիր օժտուած է զրական տաղանդով և կարող եղած է Թիւրքիոյ հայ հրապարակագիրներուն առաջինը հանդիսանալ։ Մի քանի տարիներէ ի վեր Մամուրեան բաւական կորսնցուց հանրային համարումի մէջ և նոր երիտասարդութեան մեծ մասն համակրելով հանդերձ անոր տաղանդին, հակակիր էր անոր ուղղութեանը և այն միջոցներուն, որոնցմով կը պատերազմէր իր գրական հակառակորդներու դէմ։ Սակայն հաւանական է, որ Պոլսի մթնոլորտը փոփոխէ պ. Մամուրեանը—եթէ հրապարակագիր մը կրնայ երբէք փոխուիլ։

Այս առթիւ կուզէի օգուտ քաղել մի քիչ աւելի ընդարձակօրէն խօսելու մեր մամուլի և մեր գրականութեան մասին, բայց կը վերապահեմ ուրիշ առիթի մը, վասն զի ժամանակը կարճ է, և մանաւանդ որ տանկը խորհելու, գրելու ախորժակ չը թողուր։

Տանկը Պոլսի օրուան սարսափն է։ Այդ հիւանդութեան երեւլուն առաջին օրերը բաւական զուարթ էինք. տանկ լաւ կը հնչէր, կը ծիծաղէինք, ամեն բանի պատասխան տանկ էր. Պոլիս կը խնդար. բայց համը փախաւ. երկիւղն սկսաւ ամեն սրտի մէջ մտնել. ամեն տուն մտաւ, և թէպէտ տակաւին այդ հիւանդութեան փորձառութիւն չունեցայ, բայց չորս բոլորքս այնքան տեսայ, տանս մէջ, բարեկամներուս, ծանօթներուս և անծանօթներուս մէջ, որ արդարև վերին աստիճանի դառնութեամբ կը զրեմ այս տողերը։ Գլխու սաստիկ ցաւ, սաստիկ տաքութիւն, որ մինչև 42 աստիճանի կը բարձրանայ, ոսկրներու անհանդուրժելի ցաւ, ամեն մէկ մազի արմատը կը ցաւի, երեսները դուրս կուտան, ձեռքեր կուռին, և հինգ վեց օր անկողնի մէջ տառապելէ յետոյ հիւանդը կրնայ ապաքինել։ Հիւանդութիւնը կուգայ յանկարծակի, երբ կատարելապէս ողջ առողջ է մարդ, առանց ո և է կանխաւ նշան մը ցոյց տալու։ Հարուստ, աղքատ, երիտասարդ, ծեր անխնայ ամեն ոք կը բռնուի. գործի խանդարում կայ։ Ցոյսերնիս անձրևի վրայ էր, բայց աշնանային հիանալի օրեր են և չաթթներ են յորմէ հետէ անձրևի նշան մը չէ տեսնուած ու չը տեսնուիր։

Այս տխուր դրութեան մէջ հարկ է նաև զբաղիլ զանազան տխուր խնդիրներով, որպէս է Ազարեան պատրիարքի խնդիրը, որուն կը վերադառնանք. իրաւ է, որ քիչ մը յաճախ սկսանք խօսիլ այս խնդրի վրայ, սակայն կը նշմարենք որ թերեւս արդարև կարեւոր խնդիր մը ըլլայ, նկատելով այն յուզումը, որ հետզհետէ կը ծաւալի կաթոլիկ հայոց զարգացեալ դասին մէջ ընդդէմ Ազարեան պատրիարքի։ Այդ յուզումը իրապէս գոյութիւն ունի, սակայն ատոր յարակից պարագաներու վրայ ամենատոյդ տեղեկութիւններ կը պակասին մեզ. բայց կան մի քանի լուրեր, զորս կրնանք հաղորդել առանց անոնց կատարեալ ստուգութեանը երաշխաւորելու, թէպէտև այդ լուրեր առնուած ըլլան բաւական լաւ աղբիւրներէ։ Այսպէս կը պատմուի թէ յիսուն հայ-կաթոլիկ ընտանիքներ, ալ չը կարենալով դիմանալ Ազարեան պատրիարքի հակազգային ընթացքին, զզուած և զայրացած պիտի դիմեն մեր պատրիարքարան և պիտի վերադառնան մեր եկեղեցին։ Ասոնց կարապետ ըլլալ ուզած է հ. Աճէմեան վարդապետը, որ Ազարեան պատրիարքի մտերիմն ու քարտուղարն էր։ Ազարեան պատրիարք վերին աստիճանի յուզուած, կաղաչէ, կը պաղատի վարդապետին չը տալ այս հարուածը թէ իրեն և թէ կաթոլիկութեան. հ. Աճէմեան կը վարանի, սակայն թուի թէ զզուած բոլորովին Ազարեանի ընթացքէն, նա պիտի քաշուի, առանձնանայ վանք մը։

Բայց դեռ աւելին կայ, որուն ես իսկ չեմ կարող հաւատալ, բայց կը հաղորդեմ իբր լուր, որ տարածուած է Պոլիս և որուն ստոյգ ըլլալը կամ չըլլալը կրնամ յաջորդ թղթատարով մը հաղորդել։ Կը պատմուի թէ Ազարեան պատրիարք իր մօտ հրաւիրած ըլլայ Մուսա պէյը և անոր խնջոյք տուած ըլլայ։—Ի՞նչ աստիճան տխուր զաղափար մը տարածուած ըլլալու է Ազարեան պատրիարքի վրայ, որ այսպիսի լուր մը կարենայ հաւատք գտնել։

Եւ սակայն ես անդամ չը հաւատալով հանդերձ չեմ կարող ըսել թէ Ազարեան պատրիարք ընդունակ չէ այդպիսի արարքի մը։ Այդ եկեղեցականը այնքան խնդիրներ ունի, ժառանգութեան վերաբերեալ խնդիրներու շահեր, որոց համար ամեն ստորնութեան կրնայ դիմանալ։

Հայկակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Վիէննայից գրում են, որ սուլթանը այս անդամ էլ հրաժարվեց ընդունելու Կօբուրգեան պրինցին, որը ցանկութիւն էր յայտնել Կ. Պոլիս գնալու։

—Հոկտեմբերի 16/28-ին Պարիզի ցուցահանդէսն այցելողների թիւը 299,000 էր։

—Անգլիական պահպանողական մինիստրութեան արտաքին գործերի նախկին մինիստր Դերբի այս օրերս իր մի ճառի մէջ ասեց, որ Գլադստոնի յայտնած կարծիքները Անգլիայի արտաքին քաղաքականութեան վերաբերմամբ կատարելապէս ճիշդ են։

—Ցայտնի թրքամոլ պրոֆէսոր Վամբերի նորերս կրկին տեսակցութիւն ունեցաւ սուլթանի հետ։ Այդ տեսակցութեան ժամանակ սուլթանը խօսել է քաղաքական զանազան հարցերի՝ թէ թիւրքաց Հայաստանի, թէ Կրետէի, և թէ Եւրոպական պետութիւնների քաղաքական յարաբերութիւնների մասին։ Սուլթանը ինչպէս երևում Վամբերիի տուած տեղեղութիւններից, այն կարծիքն է յայտնել, որ Թիւրքիան գերադասում է չեզոք դիրք բռնել, քան թէ միանալ երեքպետեան դաշնակցութեանը, աւելացնելով, որ չեզոքութիւնը աւելի ձեռնտու է օսմանեան պետութեան համար։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Անցած-գնացած ժամանակներից.—Ղարաքաղցի Նահապետ-աղան առիթ ունենալով խօսելու մի ուսուցչի հետ՝ հարցնում է.

Առաջ Զուլֆայի բիլէթխանի իջարան տարեկան 4,000 թուման էր, յետոյ չինեցին 6,000, յետոյ 10,000, իսկ այս տարի 12,000։ Դեռ մի 2,000 թուման էլ պէտք է սրան նրան ընծայ տալ. այս բոլոր ծախսը պէտք է մի տեղից հանել, մի բան էլ իրան պէտք է մնայ թէ ոչ. և ահա խանը լաւ իմանալով, որ մշակները չեն կարող գնալ Թավրէզ (նրանք շրջակայ գիւղերիցն էին), որովհետև գնալ գալ 10 օր կը քաշէ, անճարացած պէտք է տան ինչ որ ուզում է։ Ես փորձեցի կարեկցութեամբ մի քանի խօսք ներշնչել խանին, բայց նա լրջամտութեամբ ասեց. «էհ, սնաբ, կարեկցութիւնը, օրէնքը Արազի այն կողմը մնաց. բայեաթը ծնված է բռնութեան ենթարկվելու» (բայաթ թաբէյը զուլմ էսթ)։

Հասարակ ժողովուրդը ծնված է ենթակայ լինելու բռնութեան... Ապագայում ես փորձով իմացայ, որ Պարսկաստանի ամբողջ բարոյական շինութիւնը այս փիլիսոփայական սկզբունքի վրա է հիմնված։ Պարսկաստանը ահա ամբողջ դարերով նուիրագործել է այդ սկզբունքը։—«Բայց եթէ գանգատ տան քո ձեռքից, խան, ինչ կանես։» Խանի դէմքի վրա փայլեց մի տեսակ հեգնական ժպիտ, որ արտայայտում էր հետևեալ միտքը. «ինչ պարզամիտ մարդ ես»։

—Գանգատվել կարող են միայն մաքսատան պետին կամ Էմին-Սուլթանին, իսկ նա ինչ կարող է ասել ինձ, քանի որ ինձ իջարով է տուել և ես 12,000 թուման պիտի վճարեմ. այդ ոչինչ, թող Ալլահը այս մշակների թիւը շատացնէ, ինչքան ուզում են գանգատ տան։ Խանի այս հաստատ տրամաբանութեան դէմ ոչինչ առարկել չէր կարելի. ինձ միայն մնում էր այս բարեյաջող հանգամանքից օգուտ քաղել և խեղճ Մանասին ազատել։ Բացատրեցի եղելութիւնը խանին։

—Ինչ ես դրա համար ֆիքը անում, այս րօպէիս մի բիլէթ կը տամ, տար տուր իրան, անցնի գայ այստեղ։

—Բայց ինչպէս, նա ռուսահպատակ է, չէ որ ձեր բիլէթով բաց չեն թողնի։

—Դու տես կը լինի թէ ոչ։ Այս ասելով խանը մի պարսկերէն տպած բիլէթ առաւ ձեռքը, ըսկսեց գրել, կնքեց իր կնիքով ես (բիլէթն արդէն շիր-խուրշիդի կնքով կնքած էր, պատրաստ թէհրանից են ստանում) և տուեց ինձ։ Եւ ահա դուրս եկաւ, որ Մինաս Աւագեան, պարսկահպատակ, Սալմաստի բնակիչ, որն անցեալ տարի գնացել էր Երևան մշակութեամբ, այժմ վերադառնում է հայրենիք։ Վճարելով խանին մի թուման (ինձանից աւել չուզեց առնել) ես իսկոյն վերադարձայ նաւակով ռուսական ափը և ծածուկ յանձնեցի Մինասին պասպորտը, պատուիրելով մի ժամից յետոյ, երբ անցորդներ շատ կը լինեն, նրանց հետ ցոյց տայ իր պասպորտն և գայ։ Եւ ճշմարիտ, մի ժամից յետոյ Մինասն ուրախ մտաւ մէհմանխանէն։

Պասպորտի հարցը աւարտելով պէտք էր վերջացնել գործը և բահդարների հետ (մաքսատան ոստիկաններ—ճանապարհը դիտող)։ Բահտարների պաշտօնն է Ռուսաստանից եկած ամեն ապրանք, ըստ, որ ենթակայ է մաքսի՝ համրել, և իմաց տալ Թավրէզ, որտեղ գտնվում է մաքսատունը. ամեն բեռան հակից ստանում են նրանք 1 զրան, 2 զրան, 3 զրան, նայելով ինչ ապրանք է։ Բահտար-խանէն ես իջարայով է տուած, տարեկան 3,000 թուման։ Իսկ այն անցորդները, որոնք իրանց հետ միայն տնային իրեր ունեն և ոչ ծախու ապրանք, պարտաւոր չեն ոչինչ վճարել։ Բահտարները թէև այդ գիտեն, բայց աշխատում են նրանցից էլ մի բան կորզել։

—Պէտք է սնդուկները բանանք տեսնենք, դուցէ միջին ծախու ապրանք կայ։ Փոխանակ այդ անելու, ես աւելի լաւ համարեցի մի անամ (պարգև) տալ նրանց, քան թէ սնդուկները բանալու ձանձրացուցիչ աշխատութեան ենթարկվել. ըստանալով մի թուման ընծան, բահտարները գըլուխս տուին և գնացին։

Հազիւ մի ժամ կար, որ սկսել էի հանգստանալ և նիրհել, երբ մէհմանխանի զրան առաջ աղաղակներ լսվեցան։

—Սնաբ, սնաբ, հաղրաթ իսայի (Յիսուսի) անունով երդում ենք տալիս քեզ, մեր գործն անցկացուր։ Դուրս գամ, տեսնեմ մշակներն են եկել, խմբով աղաչում են որ գնամ խանի հետ իրանց գործը վերջացնեմ։ Տես, կարող ես 15 զրանով վերջացնել, միսանակ 30 զ. բիլէթի գինը 10 զրան է, մենք 5-ն էլ աւել ենք տալիս, էլ ինչ է ուզում այդ անիրաւմտանքը։ Ես գնացի խանի մօտ և միջնորդեցի։

—Ինչ անեմ, ասեց խանը, քո միջնորդութիւնդ մերժել չեմ կարող. բայց փոխարէնն էլ ես մի բան պիտի խնդրեմ։

—Հրամայեցէք։

—Երբ Թավրէզ հասնէք, միջնորդեցէք ռուսաց կոնսուլի մօտ, որ մեր մեծաւորին խնդրի, եկող տարի իջարան ձեռքիցս չառնեն, թէ չէ էն անիծեալ Հուսէյն խանը ուզում է 14,000 չինել և ձեռքիցս խլել։» Ես խոստացայ։ Կէս ժամից յետոյ մշակները վճարելով իւրաքանչիւրը 15 զրան, ուրախ ուրախ վազեցին դէպի նաւակը. բայց այդտեղ ֆարրաշները բռնեցին, «մեր բաժինն էլ տուէք, այստեղ ձեր հոր ծառաները չենք» ասելով և մի երկու թուման էլ ֆարրաշները հաւաքեցին։

Եւ այսպէս, պասպորտի գործը, որ բարեկարգ տէրութիւնների մէջ բոլորովին ուրիշ նպատակով է սահմանված, Պարսկաստանում եկամտի մի մեծ աղբիւր է։ Ուրիշ կերպ էլ չեն հասկանում պարսիկները, ուստի և այդ երկրում օտարահպատակը շատ հեշտութեամբ կարող է ինչ տեսակ անցագիր ուզում է ստանալ։

Հետևեալ նամակի նիւթը կը լինի Պարսկաստանում ճանապարհորդելու եղանակը։

Հ. Առաքելեան

—Մին ասա տեսնեմ, հինչացու ես։
—Վարժապետ եմ։
—Վարժապետ... լաւ, էդ իմացանք, ախր բանդ ինչ ա։
—Վարժապետ եմ էլի,—կրկնում է զարմացած ուսուցիչը։
—Ախր իմացանք, որ վարժապետ ես, վրա է բերում հինաւուրց ազան.—մին ասա տեսնենք, փ է շ ա կ դ հինչ ա, փէշակդ....
Եզրակացութիւնը ընթերցողի վրա է։

*
* *

Աւստրիան առաջադիմութիւններ է անում. այս օրերս այնտեղ հրատարակվեց մի նոր կարգադրութիւն, որով ամէն տեսակ ծառայողները պարտաւոր են համազգեստ կրել։ Մինչև անգամ մինիստրները պէտք է նոյն իսկ պարլամենտ եկած ժամանակ համազգեստով լինեն՝ կողքից կախ արած սուրը։ Անկասկած այդպիսի առաջադիմութեան համար չեն նախանձի նոյն իսկ փոքրիկ Սերբիան և Բոլգարիան։

*
* *

Վերջին վիճակագրական տեղեկութիւններից երևում է, որ ներկայումս Ցունաստանում 400 մարդու վրա մի հոգևորական է գալիս։ Այդ կողմից Ցունաստանը կարող է մրցել եւրօպական շատ ազգերի հետ, միայն չը գիտենք՝ եթէ այդ բանում հայերին և յոյներին համեմատէինք, որը առաջին տեղը կը բռնէր։

*
* *

Լօնդոնի «Times» լրագրի Պարիզի թղթակցին Պարսից Շահը շնորհել է առիւծի և արեգակի առաջին կարգի չքանշանը։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 հոկտեմբերի։ Լրագիրները հաղորդում են, որ նաւթային գործը կանոնաւորելու համար կազմված առանձին յանձնաժողովը շուտով կը ներկայացնի ֆինանսների և հաղորդակցութեան ճանապարհների մինիստրութիւններին իր մշակած նախագիծը։ «Journal de St. Petersbourg» լրագիրը հերքում է «Kölnische Zeitung» լրագրի այն լուրը, որ իբրև թէ զինուորական մինիստրութիւնը ծախսեր է անում առանց որ և է կօնտրոլի ենթարկվելու։ Զինուորական մինիստրութեան ծախսերը միւս մինիստրութիւններին հաւասար կերպով ենթարկված են մի և նոյն հաշուետուութեան և կօնտրոլին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 հոկտեմբերի։ «Journal de St. Petersbourg» լրագիրը խօսելով երկաթուղիների զրաւականով փոխառութիւն անելու մասին, նկատում է որ ինչպէս իրաւունքի, այնպէս և նիւթական ապահովութեան տեսակէտից պըրինց Կօբուրգեանի և նրա կառավարութեան զբրութիւնը հաղիւ թէ ամրացած կարելի լինի համարել մի այնպիսի ֆինանսական գործողութեան չնորհով, որը ուշադրութեան չէ առնում ոչ նախկին պարտքերը և ոչ էլ միջազգային իրաւունքի հայեցակէտերը։ Իսկ ինչ վերաբերում է այն կրէդիտային հիմնարկութիւններին, որոնք մասնակցել են այդ փոխառութեանը,—չէ կարելի չը զարմանալ այն քաջութեան վրա, որով նրանք գործ են բռնել մի այնպիսի կառավարութեան հետ, որը ոչ թէ միայն ղեկավարվում է որ և է օրինական բնաւորութիւնից, բայց որը զանցառութեամբ է վերաբերվում դէպի այն նախկին պարտքերը, որոնցով ծանրաբեռնված է Բոլգարիան։ Երէկ Ալէքսանդրեան լիցէօնի այգիում բացվեց նոյն լիցէօնի հիմնադիր Ալէքսանդր I կայսրի արձանը։ Ներկայ էին նախկին լիցէիստներից շատերը, որոնց թւում և արտաքին գործերի մինիստր Գիրս, ստատս-սեկրէտար Գրօտ, գիտութիւնների ճեմարանի փոխ-նախագահ Գրօտ և ուրիշները։ Ժամերգութիւնից յետոյ 200 մարդու նախաճաշիկ տրվեց։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 հոկտեմբերի։ Բօրսա. կալուածական բանկերի զրաւական թղթերը. Թիֆլիսինը՝ 97 ր., Քութայիսինը՝ 94 ր. 25 կ.։ Թիֆլիսի քաղաքային կրեդիտային ընկերութեան օբլիգացիաները 84 ր. 25 կ.։

ՁԱՐԶՈՒՑ, 21 հոկտեմբերի։ 1899 թուին, ամառը, Տաշկէնտում բացվելու է գիւղատնտեսութեան և գիւղական արդիւնաբերութեան իրեղէնների ցուցահանդէս, որի նպատակն է ցոյց տալ, թէ որպիսի հարստութիւններ ունի Միջին-Ասիան և թէ ինչ են արել ռուսները՝ այդ հարստութիւնները մշակելու վերաբերմամբ։ Ցուցահանդէսը կը բաղկանայ 10 բաժիններից. երրորդ բաժինը կը պարունակի Միջին-Ասիայի բամբակագործութիւնը և շերամապահութիւնը։

ԼՕՆԴՕՆ, 21 հոկտեմբերի։ «Էյտէրի» գործակալութիւնը հեռագրում է Կայիրէից, որ այնտեղ հասան Ուէլսի պրինցը և պրինց Գէորգը։ Կայարանում նրանց դիմաւորեց խեդիվը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 հոկտեմբերի։ Մեծ Իշխան Կոնստանտին Նիկոլաեվիչի առողջութեան մասին «Прав. Вѣстн.» հաղորդում է, որ Նորին Բարձրութիւնը, չը նայած որ գիտակցութեան մէջ է, բայց չէ կարողանում խօսել և աջ ձեռքը շարժել. աջ ոտի շարժողութիւնը վերականգնվեց և ուրիշի օգնութեամբ Օդոստափառ հիւանդը կարողանում է քայլել սենեակի մէջ։ Բժշկական դեպարտամենտը ենթադրում է նոր կանոններ որոշել՝ բժիշկներին քննութեան ենթարկելու համար։

ԱԹԷՆՔ, 21 հոկտեմբերի։ Շաքիր-փաշան զինուորական նաւերով և նոյն նաւերի վրա գտնվող զօրքերով ուղևորվեց Սֆակիս, ըստ որում վախենում է, որ այնտեղ եղող զօրքերը կապստամբվեն և՛ այնտեղ կը բերվեն յունաց հրացաններ։ Սօֆիայի դիպլոմատիական գործակալ Բանդարէ նշանակված է Պետերբուրգի դեսպան։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 հոկտեմբերի։ Կալուածական աղնուական բանկի խաղարկութեան տոմսակներով փոխառութեան վրա 25 անգամ աւելի պահանջ է յայտնած։ Մինչև 2 միլիարդ դումարի պահանջ է յայտնված։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 հոկտեմբերի։ «С. Пет. Вѣд.» լրագիրը լուր է հաղորդում, որ քաղաքային և զեմստվոների ինքնավարութիւնների միացեալ ուռճիկով պաշտօնների համար ընտրողների վերաբերմամբ որոշվելու է կրթական ցենզ։

Կ. ՊՕԼԻՍ, 22 հոկտեմբերի։ Վիլհելմ կայսրը այստեղ հասաւ առաւօտեան ժամը 11-ին. Նրան դիմաւորեց սուլթանը «Բախչէի» պալատում։ Ընդունելութիւնից յետոյ Վիլհելմ կայսրը և սուլթանը ուղևորվեցան Իլդիզ-Քիօսք։ Սուլթանը նստած էր Վիլհելմի հետ միասին։ Իսկ նրանց դիմաց նստած էին կայսրուհին և պրինց Հենրիխը։ Նրանց չէր ուղեկցում ոչ մի թիկնապահ։

ԲԵԼԳՐԱԴ, 22 հոկտեմբերի։ Այսօր սկուպշչինային ներկայացվեց բիւդժեսի նախագիծը։ Մուտք հաշված է $43^1/_2$ միլիոն, իսկ ծախս $47^1/_2$ միլիոն, դիֆիցիտը՝ 4 միլիոն։ Ենթադրվում է այդ դեֆեցիտը ծածկել մի քանի նոր հարկերով։ Կօբուրգեան պրինցը ուղևորվեց դէպի Սօֆիա։

ՎԻԵՆՆԱ, 22 հոկտեմբերի։ Բոլգարական կառավարութիւնը պատիրեց Շոէյնդերի աւստրիական զինագործարանին 100,000 հրացան։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ

Հոկտեմբերի 20-ին

Լօնդոնի վրա 10 ֆունտ արժէ— . .	95 ր.	85	»
Բերլինի վրա 100 մարկ — . .	46 »	40	»
Փարիզի վրա 100 ֆրանկ — . .	37 »	65	»
Ոսկի — արժէ — . .	7 »	64	»
Մաքսային կուպօններ — . .	152 »	25	»
Արծաթ — — — . .	1 »	11	»
Բօրսային դիսկօնտներ — . . .	6 և	$7^0/_0$	»
Պետակ. բանկ. $5^0/_0$ տոմս 1-ին շրջանի	99 »	25	»
— — — — 2-րդ —	99 »	—	»
— — — — 3-րդ —	99 »	—	»
— — — — 4-րդ —	99 »	—	»
— — — — 5-րդ —	99 »	—	»
— — — — 6-րդ — .	99 »	—	»
Նոր $4^0/_0$	84 »	12	»
Արևելեան $5^0/_0$ փոխառութ. 1-ին շրջ.	99 »	12	»
— — 2-րդ —	99 »	12	»
— — 3-րդ —	99 »	37	»
Ներքին $5^0/_0$ առաջին փոխառութ.	245 »	—	»
— երկրորդ —	233 »	—	»
$5^1/_2{}^0/_0$ րէնտա.	101 »	75	»
Ոսկեայ րէնտա.	172 »	50	»
Եօթերորդ կօնսօլիդ. փոխառ. . .	142 »	—	»
Նոր երկաթուղային րէնտա . . .	99 »	—	»
$5^0/_0$ զրաւական թղթեր կալուած.			
փոխ. կրեդ. ընկ. մետ.	147 »	—	»
— — թղթադ. .	92 »	—	»
Գրաւ. թղ. Ազնս. բանկի . . .	98 »	—	»
Գիւղական բանկի	102 »	—	»
$6^0/_0$ գրաւ. թղ. Թիֆլիսի—27 և 43տ.	— »	—	»
— —Քութայիսի-18 և 43տ.	— »	—	»
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ	94 »	50	»
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ. .	94 »	—	»
Օդէսայի — — .	94 »	25	»
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ. .	— »	—	»

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը ամուր է։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հանգուցեալ վարժուհի տիկին ՎԱՐԴՈՒՀԻ ՌԱՖԱՅԷԼԵԱՆԻ մահվան քառասներորդ օրը կատարվելու է հոգեհանգիստ Բագու քաղաքում, Ս. Լուսաւորիչ եկեղեցում, կիրակի օր, հոկտեմբերի 29-ին։ Ցայտնելով այդ մասին, հանգուցեալի ամուսինը, Մինաս Ռաֆայէլեան, խնդրում է ազգականներին, ծանօթներին և հանգուցեալի յարգողներին պատուել այդ հոգեհանգիստը իրանց ներկայութեամբ։
1—2

Մի հայ ԵՐԻՏԱՍԱՐԴ, որը արտաքսահմանեան մի դպրոցում ուսում առած է, որը հմուտ է անգլիերէն, ֆրանսերէն, հայերէն և թիւրքերէն լեզուների, ցանկանում է ԹԻՖԼԻՍՈՒՄ կամ յիշեալ լեզուների մասնաւոր տներում դասատու լինել, կամ որ և է առևտրական հիմնարկութիւններում հաշուապահութեան և օտար լեզուների գրագրութեան պաշտօն վարել։
1—10

ՐԻԳԱՅԻ ԳՈՐԾԱՐԱՆ
ԲԱԼԶԱՄԻ, ԼԻԿԵՐՆԵՐԻ
ՕՂԻՆԵՐԻ, ԿՕՆԻԱԿԻ, ՐՈՄԻ ԵՒ ԱՐԱԿԻ

Պատրաստում է
ՎԻԵՆՆԱՅԻ ԹԹԽՄՈՐ,
մաքրում է ՍՊԻՐՏ և պատրաստում է ՄԱՔՐՎԱԾ ՕՂԻ։

—Ա. ՎՕԼՖՇՄԻՏ, ՐԻԳԱՅՈՒՄ—

Սպառողներից լուր է հասնում ինձ, որ Ռիգայի սև բալզամը, որը գործ է ածվում տենդի, վատ մարսողութեան և այլ ցաւերի դէմ, ծախվում է ոչ թէ միայն այլ և այլ գներով (նայելով իր արժանաւորութեան ու յատկութեան), բայց և ունի զանազան այս կամ այն համ, այնպէս որ առնողը, ստանալով զանազան բալզամներ, հաւատ է կորցնում դէպի այդ խմիչքը, որի պատճառով ես իմ կողմից պարտաւորութիւն եմ համարում յայտնել ընդհանուր տեղեկութեան, որ ԻՄ ԳՈՐԾԱՐԱՆԻ ՐԻԳԱՅԻ ԲԱԼԶԱՄԸ, ինչպէս առաջ էր, այնպէս և այժմ, ունի միմիայն ՄԻ ՏԵՍԱԿ ՀԱՄ, թէև տեսակին նայելով զանազան գներով է ծախվում։

Բայի սրանից անհրաժեշտ է ուշադրութիւն դարձնել և այն հանգամանքի վրա, որ իմ ՄԻԱԿ ԻՍԿԱԿԱՆ Ռիգայի բալզամը կրում է սև գոյնի էտիկէտը՝ ոսկեայ, արծաթեայ և բրոնզեայ կնիքով, նայելով թէ Ա. Բ. կամ Գ. տեսակի է, վերև կրում է ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԳՐՕՇՄ, իսկ կողքերից զանազան ցուցահանդէսների պարգևները։ Այն ինչ ՐԻԳԱՅԻ Ա-ՆՈՒԱՆՎԱԾ բալզամը, որը կրում է սպիտակ էտիկէտներ, Ռիգա քաղաքի պատկերով,—դա մրցութեան արդիւնք է և ոչինչ կապ չունի իմ միակ և իսկական, կոնցէնի դեղատոմսով (որը ես ժառանգել եմ) պատրաստած բալզամի հետ և որը կրում է 1845 թուից գոյութիւն ունեցող իմ ֆիրման։

2—10 (Հ.) № 3 Ա. ՎՕԼՖՇՄԻՏ, Ռիգայում։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
(կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

ՐՈՒԴԿՕՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԻՍԱՀԱԿԵԱՆՑ—$11^1/_4$—12 ժ. կանանց և երեխայոց ց.
ԲԵՆԿԼԵՎՍԿԻ—11—12 ժ. ականջի, կոկորդի, քթի ց. և սիֆիլիսի (վիրաբուժ. և ատամացաւի)
ԱՐՏԵՄԻԵՎ—12—1 ժ. երեքչաբթի, ուրբաթ և կիւրակի, կանանց ց.
ԿԱՐԱՊՏԵԱՆՑ—12—1 ժ. ներքին և երեխայոց ց. բացի կիւրակի։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

ԳԱԴՕՄՍԿԻ—$5^1/_2$—7 ժ. կաչուի ցաւերի և սիֆիլիսի.
ՓՈՒՂԻՆԵԱՆ—$5^1/_2$—$6^1/_2$ ժ. ներքին, երեխայոց և ջղային ց. (էլեկտրոտերապիա)։
ԲԵՆԿԼԵՎՍԿԻ—7—8 ժամ.
Հիւանդանոցումն են մանկաբարձուհիք՝ Երևանցեան և Արտաղեան։
Վճար—50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) համար փոխադարձ համաձայնութեամբ։
Հիւանդանոցի փոխ-վերատեսուչ ՐՈՒԴԿՕՎՍԿԻ

ԲԺԻՇԿ ՊՐԷՕԲՐԱԺԷՆՍԿԻ

Մասնաւորապէս բժշկում է էլէկտրականութեամբ, ֆարադէական և գալվանական հոսանքով ձեռքերի և ոտների անդամալուծութիւնից, ըէվմատիզմից, ներվային հիւանդութիւններից և կօնտրակտուրայից (մկանունքների անդամալուծութիւն), բժշկում է կոյրերին և խուլերին անդամալուծութիւնից և նոյնպէս ընդունում է կանացի հիւանդութիւններով և սիֆիլիսով տկարներին։

Հիւանդների ընդունելութիւնը ամեն օր, առաւօտեան 9 ժամից մինչև 12 ժամ և երեկոյեան 7 ժամից մինչև 8 ժամ։ Տուն Պոպովի Միքայէլեան փողոցի անկիւն № 9 և Ելիսավէտինսկայա № 2, Ինտենդանտութեան մօտ, Վօրոնցովեան կահաւորված սենեակների դիմաց։

Домъ Попова, уголъ Михайловской ул. № 9 и Елисаветинской № 2, около Интендантства, противъ Воронцовск. номеровъ.
13—14



Въ редакціи газеты „МШАКЪ“ продаются слѣдующія брошюры: 1) „Экономич. Положеніе Турецкихъ Армянъ“, публич. лекція Д—ра Г. Арцруни, перев. съ арм. А. Аракелянца. Цѣна 25 к. 2) Die Economische Lage der Armenier in der Türkei, ein öffentl. Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von A. Amirchanjanz. Preis 25 k. 3) Die Hungersnoth in Türkisch-Armenien, ein Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von Amirchanjanz. Preis 20 kop.

Иногородные, желающіе получить брошюры, благоволятъ присылать по 30 коп. почтовыми марками, за каждую брошюру.

Адресъ. Тифлисъ, Редакція „Мшакъ“, или Tiflis, Redaction „Mschak“. (Ь)

Дозволено цензурою, Тифлисъ 23 Октября 1889 г. Типографія Канцеляріи Главноначч. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.